Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 32

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2008թ. հուլիսի 23-ին ժամը 16:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Վահե Դանիելյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Հրանտ Բեգլարյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ
Կարինե Բաղդասարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն, Կառավարման խորհրդի անդամ Կարեն Նազարյանի լիազոր ներկայացուցիչ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Հակոբ Պետրոսյանը	«Հազարմյակի մարտարավեր» հիմնադրամ- Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար
Տիգրան Քալանթարյանը	«Հազարմյակի մարտարավեր» հիմնադրամ- Հայաստան ՊՈԱԿ-ի ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ղեկավար
Գայանե Հարությունյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի գործերի կառավարիչ
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Խաչատուր Ադումյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի վերանայման սկզբունքների և տարբերակների քննարկում (տեղեկանքը, Ենթակառուցվածք բաղադրիչի վերանայված տարբերակը և վերածևավորման մոդելը կցվում են):
2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության և GFA Consulting Group ընկերության միջև 2007թ. դեկտեմբերի 25-ին ստորագրված ֆինանսական գործակալի պայմանագրի հավելված հանդիսացող ֆինանսական հաշվետվողականության պլանի քննարկում և հաստատում (տեղեկանքը և ՖՀՊ-ն կցվում են):
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում Գյուղատնտեսական գործունեության հետազոտության հաջորդ փուլերի համար խորհրդատվական ծառայությունների մրցույթի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում (տեղեկանքը կցվում է):
4. Այլ հարցեր՝

   ա/ «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների վերականգնման Պայմանագիր No RRRP-CW-03/2007–ի (Լոտ 1,2,3,4,5,և 6) իրականացման վերաբերյալ տեղեկատվության և 2008թ. հուլիսի 17-ին Կապալառուների հետ կայացած բանակցությունների արդյունքների քննարկում և հաստատում,

   բ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/գլխավոր խորհրդատու Նազելի Վարդանյանի՝ ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանին ուղղված նամակի-դիմումի քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի վերանայման հայեցակարգը (այսուհետև՝ Հայեցակարգ) դեռևս նախագծային վիճակում է, որին նախորդել է մոտ 4 ամիս տեխնիկական ուսումնասիրության և նախագծման աշխատանքներ: Հայեցակարգը նպատակ ունի տեղեկացնելու և Կառավարման խորհրդի հավանությունը ստանալու մեկ ընդհանուր փաթեթով ներկայացվելիք Ոռոգման ծրագրի ապագա փոփոխված բովանդակությանը, իրականացման նոր կառուցվածքին, ինչպես նաև վերջինիս համար անհրաժեշտ իրավական քայլերին:

Ծրագրի բովանդակության առումով, Կառավարման խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրվեց Հայեցակարգի էջ 31-ին, որտեղ ներկայացված աղյուսակում հստակ արտացոլված են այն միջոցառումները, որոնք նախատեսվում էր իրականացնել և այն միջոցառումները, որոնք ամենայն հավանականությամբ ծրագրում կմնան վերանայումից հետո:

Նշվեց, որ պոմպակայանների քանակի վերանայման վերաբերյալ կա երկու հնարավոր մոտեցում. Առաջինը՝ վերականգնել Արարատյան հարթավայրում գտնվող 5 մեծ պոմպակայանները, որոնք ջուր են մղում մայր ջրանցքներին. Երկրորդը՝ ընտրել ավելի փոքր 10-12 պոմպակայան՝ ըստ մարզային բաշխվածության:

Մայր ջրանցքների դեպքում ևս քննարկվում է երկու հնարավոր մոտեցում՝ հիմնանորոգել մայր ջրանցքների 40-45 կմ, կամ կատարել մայր ջրանցքների ավելի երկար հատվածի ընթացիկ վերանորոգում:

Քննարկվում է նաև Արգիճի ջրամբարը ծրագրից հանելու հարցը, որը սակայն ունի բավականին բարձր օգտական վերադարձելիության ցուցանիշ (ERR): Նախկինում ջրամբարի կառուցման համար կանխատեսվել էր հատկացնել 3մլն. ԱՄՆ դոլարից քիչ ավելի շատ գումար, սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տվյալ տարածքում կա լուրջ տեխնիկական խնդիր՝ կապված ֆիլտրացիոն համակարգի հետ, որն ավելացնում է ջրամբարի կառուցման գինը հասցնելով մինչև 5-10 մլն ԱՄՆ դոլարի: Միաժամանակ առկա է մասնավոր ներդրողի հարցը, որը տվյալ տարածքում նախատեսում է կառուցել ՀԷԿ: Մասնավոր ներդրողը պատրաստակամություն է հայտնել ֆինանսավորելու ջրամբարի նախագծման աշխատանքը, բայց խնդիր է բարձրացրել կապված հետագայում կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների առկայության վերաբերյալ:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ո՞րն է այս Հայեցակարգի վերջնական տարբերակի ներկայացման վերջնաժամկետը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ վերջնաժամկետը օգոստոսի 1-ն է, և այդ օրվա դրությամբ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պատրաստ կլինի ՀՄԿ և կառավարման խորհուրդ ներկայացնել վերջնական նախագիծը:

Կարինե Դանիելյանը հարցրեց, թե հնարավոր է արդյո՞ք, որ այդ պատրաստի նախագծերը հետագայում կյանքի կոչվեն:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ ջրամբարների մասով արվել է տեխնիկատնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն, որը կարող է տրամադրվել համապատասխան ներդրումներ կատարելու պատրաստակամություն հայտնող կազմակերպություններին կամ անձանց:

Աշոտ Ոսկանյանը խնդրեց պարզաբանել, թե ծրագրի ծավալների կրճատման արդյունքում առաջացած ազատ գումարները, արդյո՞ք ներդրվելու են այն նույն տարածաշրջանում, որտեղ նախկինում նախատեսված էր:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ քննարկվել է երկու տարբերակ. գումարների ներդնում ըստ տարածաշրջանային բաժանման և գումարների ներդնում ըստ առանձին բաղադրիչների (օրինակ՝ ինքնահոս համակարգեր, պոմպակայաններ, և այլն) առաջնահերթության, իհարկե չանտեսելով պարտադիր օգտակար վերադարձելիության ցուցանիշը (առնվազն 12,5%): Արդյունքում կայացվել է որոշում ներդրումները կատարել ըստ բաղադրիչների առաջնահերթ կառույցների, այլ ոչ ըստ տարածաշրջանային բաշխվածության: Սակայն, օրինակ, պոմպակայանների դեպքում դեռևս այս երկու մոտեցումները գտնվում են քննարկման փուլում:

Վանիկ Սողոմոնյանը նշեց, որ չնայած այն հանգամանքին, որ արդեն իսկ կա Հայեցակարգի մշակման աշխատանքային խումբ, այնուամենայնիվ անհրաժեշտ է ներգրավել նաև ոլորտի լուրջ մասնագետների հնարավորինս լայն շրջանակ:

ՀՀ փոխվարչապետ Արմեն Գևորգյանը հայտնեց, որ տվյալ հարցի առնչությամբ ինքն աշխատանքային քննարկումներ է ունեցել Անդրանիկ Անդրեասյանի և Արա Հովսեփյանի հետ, որի արդյունքում եկել են եզրահանգման, որ անհրաժեշտ է մեկ հավելյալ շաբաթ, որպեսզի Հայեցակարգն ուսումնասիրվի ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի փորձագետների կողմից, որից հետո միայն հնարավոր կլինի ներկայացնել վերջնական մոտեցում:

Սիմոն Ղոնաղչյանը հայտնեց, որ տեղեկանքում ներկայացված աշխատանքային խմբի կազմում լայն մասնագետների ցանկ ներկայացված չէ:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ տեղեկանքում ներկայացված է բացառապես ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ներքին աշխատանքային խմբի կազմը: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը Հայեցակարգը նախագծելիս աշխատել է ինչպես համապատասխան պետական մարմինների, այնպես էլ՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրում ընդգրկված մասնավոր նախագծային կազմակերպությունների հետ, որտեղ ոռոգման ոլորտի մասնագետների ցանկը բավականին տպավորիչ է:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ անհրաժեշտ է ամրագրել, որ համապատասխան փորձ ունեցող մասնագետներն արդեն իսկ ներգրավված են այս աշխատանքի իրականացման գործում և միաժամանակ ապահովել տվյալ մասնագետների հետագա մասնակցությունն ինչպես ՊՈԱԿ-ում, այնպես էլ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեում կատարվող աշխատանքներին:

Արայիկ Հովհաննիսյանը հայտնեց, որ Հայեցակարգում ներկայացված աղյուսակում նախկինում վերականգնման ենթակա պոմպակայանների թիվը 68 է, իսկ ներկայումս վերականգնման ենթակա պոմպակայանների քանակը չկա: Արդյո՞ք որևէ պոմպակայան չի վերականգնվելու:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ պոմպակայաններ միանշանակ վերականգնվելու են, սակայն քանի դեռ հայտնի չէ դրանց վերջնական թիվը, ուստի աղյուսակի համապատասխան սյունակում նշված է «կիրառելի չէ», սակայն նշված է, որ այդ աշխատանքների իրականացման համար հատկացվելու է մոտ 20 մլն ԱՄՆ դոլար, որը 5 մլն-ով գերազանցում է նախկինում նախատեսվածը: Հետագայում որոշման գալուց հետո աղյուսակում կավելացվի վերջնական թիվը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ այս փաստաթուղթը կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնելու նպատակը հանդիսանում է հիմնական մոտեցմանը կառավարման խորհրդի հավանությունը ստանալը, քանի որ փաստաթղթում ամրագրված են մի շարք աշխատանքային և ծրագրային նոր մոտեցումներ, օրինակ՝ մեկ միասնական տեխնիկական վերասկող ունենալու գաղափարը:

Արամայիս Գրիգորյանը հայտնեց, որ ծրագրի վերանայման գործընթացում այլ ցուցանիշների հետ զուգահեռ անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել ոռոգվող հեկտարների քանակին և նախապատվությունը տալ այն ծրագրերին, որոնք ավելի են մեծացնում ոռոգվող հեկտարների քանակը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ անհրաժեշտ է համարում հաստատել ներկայացված փաթեթը և մեկ շաբաթ ժամանակ տրամադրել վերջնական նախագծի ներկայացման համար:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի վերանայված տարբերակի նախագիծը, վերաձևավորման մոդելը և վերոհիշյալ բաղադրիչի վերանայման հետ կապված ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հետագա քայլերի մասին տեղեկանքը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ Ֆինանսական հաշվետվողականության պլանը այն փաստաթուղթն է, որով հիմնականում կարգավորվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի ֆիսկալ վարչարարությունը: Այն կենդանի փաստաթուղթ է և ենթակա է փոփոխման ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից, ուստի եթե հետագայում անհրաժեշտ լինի կատարել փաստաթղթի հետագա շտկումներ, ապա ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն այն կներկայացնի կառավարման խորհրդին՝ ՀՄԿ-ի հետ համաձայնեցնելուց հետո:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե քանի՞ աշխատակից ունի GFA Consulting Group ընկերության հայաստանյան գրասենյակը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ գրասենյակում աշխատում է 3 օտարերկրյա մասնագետ և 4-5 տեղական:

Պարզաբանումից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության և GFA Consulting Group ընկերության միջև 2007թ. դեկտեմբերի 25-ին ստորագրված ֆինանսական գործակալի պայմանագրի հավելված հանդիսացող ֆինանսական հաշվետվողականության պլանը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

<u>Միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում Գյուղատնտեսական գործունեության հետազոտության հաջորդ փուլերի համար խորհրդատվական ծառայությունների մրցույթի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 4-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե արդյոք 17,5% գնաճը և համապատասխանաբար պայմանագրային գումարի ավելացման հարցը քննարկվել է ՀՀ ֆինանսների նախարարության հետ, քանի որ հենց վերջինս է հանդիսանում տվյալ հաշվարկներ կատարող մասնագիտացված մարմին և ունի համապատասխան լուրջ աշխատանքային փորձ և ռեսուրսներ:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ հանդիպումներ են անցկացվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ, բացի այդ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրականացրած հաշվարկները վկայում են 16-22% գնաճի մասին: Վերջինիս վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարը տեղեկացվել է:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ նպատակահարմար է գտնում տվյալ հարցի լրացուցիչ քննարկում կազմակերպել ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

ա/ կետի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին և ՀՀ ֆինանսների նախարարությանը համատեղ երկօրյա ժամկետում քննարկել և պարզել ՀՀ-ում առկա՝ շինարարական ապրանքների վերջին չորս ամիսների իրական գնաճը և այն ներկայացնել ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգման ենթածրագրի Առաջին փաթեթում ընդգրկված շինարարական ընկերությունների հետ պայմանագրային բանակցությունների ընթացքում:

Օրակարգի 4-րդ հարցի բ/ կետի վերաբերյալ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը հայտնեց, որ իրեն դժվար է ներկայացնել տվյալ հարցը: Փոխարենը, խորհրդի անդամներին բաժանվեց ՀՀ վարչապետին ուղղված նամակ - դիմումի պատճեն:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ անհրաժեշտ է հարցին համերաշխ լուծում տալ, ուստի պետք է հարգել Նազելի Վարդանյանի խնդրանքը և հավանություն տալ վերջինիս՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/գլխավոր խորհրդատուի պաշտոնից ազատմանը՝ իր կողմից ներկայացրած դիմումի համաձայն:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ պատրաստ է գնալ փոխադարձ զիջումների. այն է՝ չեղյալ համարել Նազելի Վարդանյանին տրված նկատողությունը և աշխատանքի գնահատումը, հարցը բարիդրացիական հարթության վրա լուծելու նպատակով:

բ/ կետի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հավանություն տալ Նազելի Վարդանյանին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/գլխավոր խորհրդատուի պաշտոնից ազատելու խնդրանքին և հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանին ազատել վերջինիս աշխատանքից՝ համաձայն ՀՀ վարչապետին իր ներկայացրած նամակ - դիմումի: Միաժամանակ, հանձնարարել Արա Հովսեփյանին չեղյալ համարել Նազելի Վարդանյանին տրված նկատողության հրամանը և աշխատանքի գնահատման փաստաթուղթը:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը